



Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

N - 176
«21» 06 2010թ.

N - 716
«24» 06 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌ ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարևորելով Հայկական սփյուռքում հայապահպանության ռազմավարական նշանակությունը՝

-Հայաստանի նկատմամբ սփյուռքահայ երիտասարդության մեջ նվիրումը և սերը զորացնելու առաքելությունը, և Հայաստան պետության ազգային բանակի հանդեպ պատշաճ վերաբերմունքի, հարգանքի և երախտագիտության ձևավորումը,


-հայ երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության, հայոց պետականաստեղծ գործին աջակցելու պատրաստակամության սերմանման անհրաժեշտությունը,


-Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, Հայաստանի և Հայկական սփյուռքի երիտասարդության, մասնավորապես զինվորների շրջանում կապերի ստեղծման և ամրապնդման նպատակով

Հ Բ Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ն Թ՝

1. Հաստատել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ սփյուռքի նախարարության 2010 թվականի համատեղ ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ Բ Ա Ն ՈՒ Շ Հ Ա Կ Ո Ւ Բ Յ Ա Ն


Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Մ Փ Յ ՈՒ Ռ Ք Ի Ն Ա Ն Ա Բ Ա Բ



Մ Ե Յ Բ Ա Ն Օ Զ Ա Ն Յ Ա Ն


Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Ն Ա Բ Ա Բ



Հավելված

ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ սփյուռքի նախարարի

« » ----- 2010թ.

N-----համատեղ հրամանի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ

1. «2010 թվականը՝ Մայրենիի տարի» ծրագրի շրջանակներում (տարվա ընթացքում).
 - մայրենի լեզվի բաց դասեր զինծառայողների համար,
 - զորամասերում արևելահայերենով և արևմտահայերենով գրական-երաժշտական միջոցառումներ,
 - ՀՀ պաշտպանության նախարարության և Հայաստանի գրողների միության «Ցուլքեր» գրական մշակութային հանդեսի խմբագրակազմի իրականացրած ծրագրի ձևաչափով ստեղծագործող զինծառայողների աշխատանքներին նվիրված միջոցառումների կազմակերպում, դրանց՝ «Արի տուն» ծրագրով Հայաստան ժամանող սփյուռքահայ պատանիների ու երիտասարդների մասնակցության ապահովում:
-«Հայկական բանակն իմ աչքերով» խորագրով աշխատանքների ու զինծառայողների լավագույն ստեղծագործությունների հրապարակում ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» շաբաթաթերթում և Սփյուռքի մամուլում, «Ասպար» ռադիոհանդեսով դրանց հաղորդման կազմակերպում:
2. «Սփյուռքի երիտասարդության Հայաստան պարբերական այցելությունների՝ «Արի տուն» ծրագրի շրջանակներում (հունիս-հոկտեմբեր).
 - ծրագրի մասնակիցների ճանաչողական այցեր զորամասեր, համատեղ ձեռնարկների կազմակերպում՝
 - <Որն է, բաբո, մեր Հայրենիք> խորագրի ներքո մշակութաժամանցային միջոցառումների կազմակերպում,
 - զորամասեր այցելությունների ընթացքում անձնակազմի և սփյուռքահայ պատանիների ու երիտասարդների մասնակցությամբ հայրենասիրական երգի մրցույթների կազմակերպում,
 - զորամասերում կամավոր աշխատանքների կազմակերպում՝ 15-18 տարեկան տղաների մասնակցությամբ,

